# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 1261-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1044-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

***որոշում եմ՝***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 2023թ. օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0051-0003 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.23437 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացիներ Լարիսա Քոչինյանի և Արթուր Ռամազյանի սեփականության իրավունքը դադարեցնելու և 06-088-0051-0003 ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ Արամ Ռամազյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 1044-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 1262-Ա

### ԱՂԱՍԻ ՎԱՆՈՅԻ ՁԱՎԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, սեփականության իրավունքի N 07042021-06-0068 վկայականը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, «ԿԱՐՏՈԳՐԱՖԻ» ՍՊ ընկերության կողմից տրված 08.09.2023 թվականի տեղեկանք N 2-ը՝

***որոշում եմ.***

1. Աղասի Վանոյի Ձավարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ մարզ Լոռի, համայնք Ալավերդի, գյուղ Այգեհատ, 3-րդ փողոց, 17 հասցեում գտնվող, անշարժ գույքը վերաբաժանել՝ 6.859328 հա, 0.047987 հա մակերեսների:
2. Վերաբաժանված 0.047987 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Այգեհատ, 7-րդ փողոց, 11 փոստային հասցեն, իսկ

6.859328 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել՝ համայնք Ալավերդի, գյուղ Այգեհատ, 7-րդ փողոց, 11/1 փոստային հասցեն:

3. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1263-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 1256-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով,

**Որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքի ղեկավարի 26 հոկտեմբերի 2023 թվականի «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-002-0238-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1256-Ա որոշման 4-րդ կետի մեջ «105110 (հարյուր հինգ հազար հարյուր տաս)»բառակապակցությունը փոխարինել «150110 (հարյուր հիսուն հազար հարյուր տաս)» բառակապակցությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1264-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետությա ն կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով, նախագիծը,

**Որոշում եմ՝**

1.Տրամադրել շինարարության թույլտվություն, թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, 35/1 հասցեում գտնվող, Անահիտ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքի էլեկտրամատակարարման շինարարական աշխատանքները:

2.Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1265-Ա

### ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-022-0008-0009 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ռուզաննա Կիրակոսյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 868046 վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը,Աքորի բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 18.10.2023թ. տրված N 5716 տեղեկանքը,

**Որոշում եմ.**

1.Հաստատել Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-022-0008-0009 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի 0.10814 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից տրված հատակագծի:
2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական տարածքում գտնվող, Ռուզաննա Ռազմիկի Կիրակոսյանին, Էդգար Արամայիսի Կիրակոսյանին և Արփինե Արամայիսի Կիրակոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 06-022-0008-0009 ծածկագրով, բնակավայրերի

նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.10814 հա մակերեսով հողամասում, կադաստրի կոմիտեում 2023HSUXK2 ծածկագրով հաշվառված, 2015թ. ինքնակամ կառուցված, 83.0 քմ արտաքին մակերեսով (64.8 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը և կիսակառույց տունը:
3. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-022-0008-0003 ծածկագրով, 0.10814 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող անշարժ գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 8/7 փոստային հասցեն:
5.Օրինականացված շինությունների համար սահմանված 72542 (յոթանասուներկու հազար հինգ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ արժեքով վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 1266-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԻ 10 ՓՈՂՈՑ 31 ՀԱՍՑԵՈՒՄ «ԿԱՅԾՈՆԳԱԶ» ՍՊԸ-ԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՝ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ, ԺԱՄԸ 24.00 -ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի , Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 27-Ն որոշման և հիմք ընդունելով Շնող գյուղի «Կայծոնգազ» ՍՊԸ-ի տնօրեն Կորյուն Բոշյանի 27.10.2023թ. դիմումը

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող գյուղի 10 փողոց 31 հասցեում գտնվող «Կայծոնգազ» ՍՊԸ-ին տրամադրել առևտրի՝ սեղմված բնական գազի վաճառքի, ժամը 24.00-ից հետո աշխատելու թիվ 10 թույլտվությունը:
2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով «Կայծոնգազ» ՍՊԸ-ից գանձել տեղական տուրք 25000 ( քսանհինգ հազար ) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1267-Ա

## 06-060-0037-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆ ՈՒ ԾԱԾԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, հիմք ընդունելով Գառնիկ Սերյոժայի Վարոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 26032015-06-0022 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, շինության տեխնիկական վիճակի մասին «ՔԾՓԿ» ԲԲ ընկերության կողմից 16.10.2023թ. տրված N 15/268 դրական եզրակացությունը,Հաղպատ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 03.10.2023թ. տրված N 5387 տեղեկանքը,

**Որոշում եմ.**

1.Օրինականացնել Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 11-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող, Գառնիկ Սերյոժայի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-060-0037-0002 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.6 հա մակերեսով հողամասում, 2016թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 20232JPKZX ծածկագրով հաշվառված, 10.7 քմ արտաքին մակերեսով (9.3 քմ ներքին մակերեսով) բնակելի տան մասը և 26.4 քմ մակերեսով) ծածկը:
2. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Օրինականացված բնակելի տան մասի համար սահմանված 7951 (յոթ հազար ինը հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ և օժանդակ շինության՝ ծածկի համար սահմանված 11770 (տասնմեկ հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ արժեքներով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4.Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 27
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 1268-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՀԱՐ ՌԱԶՄԻԿԻ ՂՈՒԼԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

հիմք ընդունելով Գոհար Ռազմիկի Ղուլինյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից 15.09.2023թ. տրված 0-40 տեղեկանքը՝

***որոշում եմ.***

1.Ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0150-0246 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0036 հեկտար մակերեսով համայնքային սեփականության

հողամասում գտնվող, Գոհար Ռազմիկի Ղուլինյանի կողմից ինքնակամ կառուցված, 58.8 քմ արտաքին մակերեսով (50.4 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության նկուղով ավտոտնակի նկատմամբ:

2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0150-0246 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0036 հեկտար մակերեսով հողամասում գտնվող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող, 1996 թվականին ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023UR3GCD ծածկագրով հաշվառված, 58.8 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը:

3.Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, կադաստրային քարտեի 06-002-0150-0246 ծածկագրով, 0,0036 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող անշարժ գույքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, 4/4 փոստային հասցեն:

4.Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Նկուղով ավտոտնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Անշարժ գույքի պետական գրանցում ստանալուց հետո, տասնհինգ աշխատան քային օրվա ընթացքում ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գոհար Ռազմիկի Ղուլինյանին օրինականացված նկուղով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 31
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 1269-Ա

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021թ. N 698-Ն որոշման IV գլխի 31-րդ կետի 6) ենթակետով,

հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի 26/10/2023թ. N Կ-26102023-06-0210 որոշումը՝

***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքի ղեկավարի 26 սեպտեմբերի 2023 թվականի «ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԸ, ՔՈԹԵՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1137-Ա որոշման 1-ին կետից առաջ լրացնել հետևյալ կետը՝

1.1 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 5/16 հասցեում գտնվող, 06-112-0037-0047 կադաստրային ծածկագրով, 3.9057 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը կադաստրային քարտեզում ուղղել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համապատասխանեցնելով գրանցված իրավունքին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 1270-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-069-0072-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանի,

հիմք ընդունելով Արմեն Հրանտի Հախվերդյանի դիմումը, անձնագրի պատճենը, պետական գրանցման թիվ 1787776 վկայականը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերը՝

**որոշում եմ.**

1.Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-069-0072-0005 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.283 հա մակերեսով հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Ճոճկան, 5-րդ փողոց, 23 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի N 1271-Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ 06-022-0101-0107 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը՝

***որոշում եմ.***

1.Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն հաապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքորի գյուղի կադաստրային քարտեզի 06-022-0101-0107 ծածկագրից առանձնացվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության 0.0180 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Աքորի, 14/1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1272-Ա

***ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՄԱՐԻԱ ՂՈՐԽՄԱԶՅԱՆԻ, ԼԻԱ ՂՈՐԽՄԱԶՅԱՆԻ, ԱՍՏՂԻԿ ՂՈՐԽՄԱԶՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքի» 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Ընտանեկան օրենսգրքի» 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Ասատուրի Ղորխմազյանի դիմումը, Ալավերդի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 2-ի արձանագրությունը՝

**որոշում եմ.**

1.Թույլատրել Արմեն Ասատուրի Ղորխմազյանին (ծնված՝ 19.01.1989 թ., անձնագիր՝ AS0286514, տրված 18.07.2018 թ., 055-ի կողմից, վավեր է մինչև 18.07.2028 թ.,) իր անչափահաս երեխաներ Մարիա Արմենի Ղորխազյանի(ծնված՝ 17.02.2017թ.), Լիա Արմենի Ղորխմազյանի(ծնված՝ 01.06.2021թ.), Աստղիկ Արմենի Ղորխմազյանի (ծնված՝ 21.06.2023թ.) անունով ձեռք բերել Լոռու մարզ, ք, Վանաձոր Տարոն-2 ՔՇՀ-7 թաղամաս 23, 12 բնակարան, կադաստրային ծածկագիր՝ 06-001-0009-0001-015-012, վկայական N 25062020-06-0040) անշարժ գույքը և այն գրավադրել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1273-Ա

## *ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով, նախագիծը՝

***որոշում եմ.***

1.Տրամադրել շինարարության թույլտվություն, թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, 18/30 հասցեում գտնվող, Սիրվարդ Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքները:

2.Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կո ղմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ա. ԹԱՄԱԶՅԱՆ***

2023թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1274-Ա

### *ՍՈՒՐԵՆ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով,

հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի N Կ-27102023-06-0122 որոշումը, սեփականության իրավունքի N 816764 վկայականը, 24.08.2021թ. N 13 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, 11.10.2021թ. N 25 շինարարության թույլտվությունը, 29.09.2023թ. N 8 շահագործման թույլտվությունը՝

***որոշում եմ.***

1.Սուրեն Մաթոսյանին տրամադրված կառուցապատման թույլտվություններում՝ 24.08.2021թ. N 13 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, 11.10.2021թ. N 25 շինարարության թույլտվության և 29.09.2023թ. N 8 շահագործման թույլտվության մեջ կատարել լրացում և ավելացնել ընդհանուր համատեղ սեփականատերեր հանդիսացող հետևյալ անձանց անունները, ազգանունները. Թերեզա Շալաղոյան, Նարեկ Մաթոսյան, Միեր Մաթոսյան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1275-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով, նախագիծը՝

***որոշում եմ.***

1.Տրամադրել շինարարության թույլտվություն, թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 11-րդ փողոց, 5 հասցեում գտնվող, Լյովիկ Մաթոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից պատշգամբի կառուցման շինարարական աշխատանքները:

2.Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կո ղմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1276-Ա

### *ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-069-0062-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՁԵՂՆԱՀԱՐԿՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ավետիք Միշայի Սիրադեղյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 1763940 վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Ճոճկան բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 24.10.2023թ. տրված N 5889 և 5890 տեղեկանքները՝

***որոշում եմ.***

1.Հաստատել Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-069-0062-0015 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի 0.09062 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Միշայի Սիրադեղյանին, Գոհար Հրաչիկի Սիրադեղյանին, Իգոր Ավետիքի Սիրադեղյանին, Էդգար Ավետիքի Սիրադեղյանին և Միքայել Ավետիքի Սիրադեղյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 06-

069-0062-0015 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.09062 հա մակերեսով հողամասում, կադաստրի կոմիտեում 2023DSRKLD ծածկագրով հաշվառված, 2015թ. ինքնակամ կառուցված, 249.1 քմ արտաքին մակերեսով (205.8 քմ ներքին մակերեսով) ծեղնահարկով բնակելի տունը, ընդհանուր՝ 85.02 քմ արտաքին մակերեսով (71.5 քմ ներքին մակերեսով) օժանդակ շինությունները՝ ավտոտնակը, անասնաշենքը, պարիսպը:

3. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-069-0062-0015 ծածկագրով, 0.09062 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող անշարժ գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Ճոճկան, 7-րդ փողոց, 2 փոստային հասցեն:

5.Օրինականացված ծեղնահարկով բնակելի տան համար սահմանված 185082 (հարյուր ութսունհինգ հազար ութսուներկու) ՀՀ դրամ և օժանդակ շինությունների համար սահմանված 37902 (երեսունյոթ հազար ինը հարյուր երկու) ՀՀ դրամ արժեքներով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1277-Ա

***ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԻՇԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿՈՒՂՈՎ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.02.2023Թ. N 161-Ա, 26.09.2023Թ. 1138-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

